

ԲԱՆԱԿԱՐԱՎԱՆ

- 1 -

ՍԱՀԱԿ ՊԱՐԵՒԹԻ ԵՒ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Մալսէս Խորենացի նշանաւոր տողեր
ունի իր Պատմութեան Երրորդ Գրքին
կա, կը և կը Գլուխներուն մէջ,

Այսպէս ան կը գրէ ակնորկելով մեծն
Սահակին և Մեսրոպին և երեց թարդմա-
նիչներուն. «Բայց քանզի անդէտք էին
մերում ապրուեսի, ի բազում մասանց
թերացին գործն գտանէր. զառան որոյ
առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեղ
տուքցին յԱղեքսանդրիոյ ի լեզու պան-
ծալի, ի սոտոյդ յօդանալ ձեմարանին վե-
րաբանութեան»:

Թէ ինչ ընելու գացած է Մովսէս Ա-
զեքսանդրիս և թէ ինչ ըրած է հոն՝ հա-
կիրճ բացարութեամբ կը ներկայացնէ.
«Ըւսանել զզօրութիւնն պէս սպէս իմաստից
ի նորն Պղատոնէ, յիմն սակամ վարդապե-
տէ, որում ոչ անորժան գտայ աշակերտ,
և ոչ անկոտար զարժմամբ ի յանդ ելեալ
արուեստից ինքնացայ»:

Զինքը և իր ընկերները Աղեքսան-
դրիս զրկողները — Սահակ և Մեսրոպ —
ըստ իրեն, յուրով կը սպասէին իրենց
դարձին, և Յու պատուասիրել իմով ամէն-
իմաստ արուեստիւու և կատարելագոյն
յարմարութեամբաւ:

Իր մեծ գուսացիչներուն — Սահակին
և Մեսրոպին — հանդէպ անաւագիչ այս
վերագրումները և իր անձին վերաբեր-
մամբ արտայտած ցցուն ինքնազսկու-
թիւնները անվրէպ պիտի վերաւորէին
ուրիշներու զգացաւմները, և Խորենացիի
վերոգրեալ ակնարկութիւնները պիտի
չմային առանց ներքողական անդրա-
դարձութեան,

Բայց նախ համագուտակի տեսնենք թէ
ինչ էր այն արուեստը որուն անդէտ էին
մեծ թարգմանիչները:

Նկատի առնելով Աղեքսանդրիոյ մէջ

ուսման հետեւող մէկ կրտսեր թարգմանիչ-
ներուն գրական աշխատան քնները՝ կը տես-
նենք որ անոնք սերտած են երրեակ ուս-
մանց տարերքը, այսինքն ֆերականու-
թիւն, Հոկտորութիւն և իմաստասիրու-
թիւն. Այս ուսմանց Հոյաստանի բարձրա-
գոյն գորոգներուն մէջ ներթուծումը ան-
շուշտ կարեւո էր, և այդ իսկ պատճառու-
մեծ թարգմանիչները գիրենիք զրկած էին
Աղեքսանդրիա, և բնականարար յուսով
կը սպասէին անոնց վերագրածին:

Բայց Խորենացին ուրիշ բան մըն ալ
կ'ըսէ որ հարցը աւելի կը ծանրացնէ.
ան կը գրէ. «Ի բազում մասանց թերաց-
եալ գործն գտանէր», մ՞ր գործին կ'ակ-
նարկէ, և ի՞նչ մասիր թերի մնացած էին,

Այս հարցումին պատասխան ալ թե-
րես կրնանք գոնել այն թարգմանու-
թիւններուն մէջ զոր կատարեցին Խորե-
նացին և իր ընկերները. յատկապէս կըր-
նանք մատնանշել Փիլոնի Սուրբ Գրական
Միկնութիւնները, որոնց հայերէն թարգ-
մանութեան պակասը չէր կրնար զգալի
չըլլալ մէր ուսումնասէր նախնեաց:

Արդ որքան ալ անհիմն չըլլային Խո-
րենացիի պարծենկոտ հաստատումները,
սակայն և այնպէս Սահակ Պարթէի հոյա-
կապ գիտութեան և տիտանեան աշխա-
տանքին վրայ կարծես ստուեր ձգող մյոդ
առղերը չէր կրնար անդրագարծումի
չմղել Ս. Սահակի հիսցողներէն մին կամ
միւսը Մենք այլպիսի անդրագարծում
մը կը նկատենք Լազար Փարպեցիի Առա-
ջին Դրուագին հետեւալ տողերը: Սուրբ
Հայրապետ Սահակ, այոյժ առլցեալ ան-
ցուցանէր վարժիք վրացում գիտովք
Յունաց, եղեալ կատարելապէս հմտւա ենր-
դուպական տառիցն և նուերարական յոր-
դասաց յայտարանութեանն, ևս առաել
տեղեակ եւել փիլիսոփայական արհեստիցն»
(Տես, Սրբն, 1966, էջ 201. Նաև Բանբեր
Մատենադարանի, թիւ 8, 1967, էջ 266):

Ընդգծեցինք երրեակ սւմմանց առ-
ընքը, որոնց կատարելապէս հմուտ և
տեղեակ կը յայտարարուի Սուրբ Սահակ:
Այսպիսի հաստատում մը Լազար Փար-
պեցիի Պատմութեան մէջ՝ արդարէ գոհա-
ցում, պիտի տար՝ Սուրբ Սահակի հանդէպ
իրաւամբ հիացում, ունեցաղ հարազար-

հայկաբան երէց թարգմանիչներուն և առնոց շառաւիզներուն, ըսդդէմ յոխորտ յաւակնութիւններով պանձացող և յունաբանութեամբ տոգորուած կրտսեր թարգմանիչներուն, մասնաւորաբար անոնց խօսնակը հանդիսացող Մովսէս Խորենացին:

— 2 —

ՊԵՏՐՈՍ ԵՊՈ. ԱՆՏԻՈՔԱՅ (475 – 488)

Թղթոց Գրքին մէջ (էջ 99 – 107) կը հանդիպինք սա վերնագրով գրութեան մը. «Հաւատարմագունի և իմաստագունի և աստուածասիրագունի եղբաւր՝ ողորմելիս Պետրոս՝ Տերամբ խնդաւ»:

Թղթոց Գրքին մէջ (էջ 99 – 107) կը հանդիպինք սա վերնագրով գրութեան մը. «Հաւատարմագունի և իմաստագունի և աստուածասիրագունի եղբաւր՝ ողորմելիս Պետրոս՝ Տերամբ խնդաւ»:

Ա. — Պետրոս Եպո. Վրացի. — Օրմանեանի համաձայն Պետրոս Եպո. Վրացին է այս Թուղթը գրողը. ան կ'ըսէ. «Մենք կը կարծենք թէ Պետրոսն ալ լուս կեցած չէ, և ողորմելիս Պետրոս ստորադրութեամբ՝ հաւատարմագունի և իմաստագունի և աստուածասիրագունի եղբար ուղղուած գիրը Պետրոս Վրացիէն Վրթանէս տեղապահի գրուած է, իւր միտքը հաւատելու համար» (Ազգապատում, էջ 606):

Բ. — Պետրոս Եպո. Անտիոքայ. — Թղթոց Գրքին մէջ գանուող յիշատակութիւնները սակայն մեզի կը մատնանշեն Անտիոքի Պետրոս Եպիսկոպոսը իւրեք հեղինակ այս Թուղթին: Այդ տեղիներուն են.

1. — էջ 126. — մեջ որ յանդիմանեն և նզովն զժողովն և զուումարն Թուղթն Զենոնի ուղղափառ թագաւորի, որ կոչի Հենատիկոն, և Թուղթն Երանելոյ Անտառայ թագաւորի, և գիրք Տիմոթեոսի Ազեքոսանդրացոյ, և Թուղթ Յովհաննու Եպիսկոպոսապետի, և Թուղթն Պետրոսի Անտիոքացոյ, և Պատճենն իսկ. և այլ բազում Թուղթք ուղղափառաց:

2. — էջ 494. — մեջ ի լինել Ժողովոյն Թաղկեդոնի հալածական արարին

զվեցեքին^(*) սուրբ հարքն, զոր աճապարեալ Պետրոս Անտիոքացոյին գրէ զեղեալ իրսն զամենայն ի Հայք, զպատառութիւնաց ի մահուանէն Քրիստոսի, զգուշացուցանէ պինդ կալ ի խոստովանութիւն առաջին սուրբ հարցնա:

Այսպէս կը գրէ նաև Գիրք էակաց, մեւ զայս ամենայն գրեաց ի Հայք Պետրոս Անտիոքացոյին, զի մի՛ միտքանեսցին շար պատաւէնիցին Թաղկեդոնի երեսպաշտացն և զՔրիստոս ուրացողացն» (Զեռ. Ս. Յ. Թ. 1303, էջ 216).

Այս տուեալները Կ'առաջնորդեն մեզ այն եղբակացութեան թէ խնդրոյ առարկայ Թուղթին հեղինակն է Պետրոս Անտիոքացոյի:

— 3 —

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Հ. Գ. Մելքոնեանի թարգմանած Ասորական Աղրիւրներ շարքի Ա. Հատորին մէջ, տպուած Երևան 1976 ին, էջ 376, կը կարգանք հետեւալ տողերը.

«Այս միծ անպատվությունը չհանդուրժեց Վարդան Մամիկոնեանը, որը Զոյն էր կոչվում, այն է լամակոր, և նրա աղքական ուրիշ նախարարները, որոնց անպատվել էին, սպանեցին ամեն պարսիկ մարզպանին՝ նրա տունը կրակի ենթարկելով, և ընաանիքով հանդերձ փախուստի դիմեցին դէպի կոստանդնուպոլիսաւ:

Թարգմանիչը տողատակի ծանօթութիւն մը գրած է ուր կը կարգանք. Ժնուքը բգեշիս Վարդան Մամիկոնեանի մասին է, որի մականունը Զոյն անհասկանալի է, գուցէ հայերէն քաջ բառի ա-

(*) Ակնարկուած այդ վեց հայերեռուն անունները նոյն գրութեան մէջ քիչ մը վերը յիշուած են այսպէս: «Զօր ենուն արկեալ սպանիք զմեծն Հետուկորոս, հալածելով զՊետրոս Անտիոքացին՝ բայլ կոչելով, և զթուլիս Աղեկանացի, և զՄենիքանոս նպիսկոպոս Եփեսսի, և զԱնառաւալիս, և զԺմաթէսս. զայս վեց եպիսկոպոս գախուցիք և պանիք» (Գիրք Թղթոց, էջ 491).

զավադումն լինի: Թ. Դարի Վրաց հեղինակ Արսենին այս չորսին բառը թարգմանում է կամաւլուր»:

Զեխիս մականունին արուած կամակուրիմաստը ճիշդ կը թուի մեզի, երբ համեմատութեան առնենք կ. Պոլսոյ Փոտ պատրիարքին կողմէ Հայոց Զաքարիա կաթողիկոսին գրուած նամակին հետեւալ հասուածը, ուր սոյն Վարդանին արուած է հոգանիչ Խոսկ Խոսկիրը:

Ճեւ ի Զ եւ ի Ժ թուականութեան Հայոց սպան Խելմ Վարդան Մամիկոնեան զԱռւրէն մարզպան Պարսից, առ ի չժումելոյ արհամարհանացն. քանզի երարձ զպատիւ ազատացն և ետ յեպիսկոպոսւնն, և ինքն փախեան բազում աղյուս, և համաւրէն ընտանեաւք եմուտ ի յոյնօս (Յուցակ Զեռ. Ս. Յակոբեանց, Գ. Հատոր, 1968, էջ 46):

- 4 -

ԳՐԻԳՈՐ ՇՆԹԱՑԱԿԻՒ ԾՆՈՂՔԸ

Մկրտիչ Եպոս. Աղաւանունի 1929ին լոյս ընծայած է «Միաբանք և Այցելուք Հայ Երուսաղէմի» յորչորչուած իր երկասիրութիւնը, ուր Շղթայակիր Գրիգոր Պատրիարքի հայրը կոչուած է մահաւոսի Աւետիս, իսկ մայրը՝ Ճօնար (էջ 83):

Հ. Ն. Ակինեան Շղթայակիր Վրայ յօդուած մը հրատարակած է 1952ին, Հանդէս Ամսորեայ աւոտմանաթերթին մէջ, ուր Շղթայակիր համար կ'ըսէ. Շիր ծնողքն ին Աւետիս քահնանայ և Ստառա (էջ 188): Եւ առատակին կը ծանօթագր և Այսպէս իր ինքնագիր Եթատակարաններու մէջ 1687ին և 1703ին: Երուսաղէմի թ. 1464ի մէջ Արքանամ գրիչի յիշած Աւետիսին և Զօնար հաւանօքէն գրչին ծնողներն են, ուստի կը սիսալի հոս Մ. Աղաւանունի:

Գ. Բամպուքճեանն ալ յօդուած մը կը հրատարակէ 1970ին, Շղթայակիր Տարեգիրքին մէջ, Շղթայակիրի ծննդեան 300-ամեակին առթիւ, և կ'ըսէ. Ըլսու Աղաւանունի Արքեապիսկոպոսի՝ հայրն է Մահաւոսի Աւետիս կամ Աւետիք, իսկ մայրը՝ Գոհար կամ Ճօնար: Հ. Ն. Ակինեանի հա-

մեմատ ալ, հայրն է Աւետիս քահանայ, մայրը՝ Ստառ և եղբայրը Պիտրոս, որ մեռած է նախ քան 1687 թուականը (էջ 67):

Մեր մեծանուն և բազմարդիւն պատրիարքին ծնողներուն մասին ստեղծուած այս շփոթութիւնը պարզելու համար ի հարէկ գիմնէլ պէտք է վստահելի աղրիւրներու, որոնք չեն պահիր բարեկախառարարու:

Արքահամ Դպիր, Գրիգոր Շղթայակիր քեռորդին և աշակերտը, Ամբրատօլու վանքին մէջ իր մօրեղքօր համար օրինակած է ֆողովածոյ մը ուր կ'ըսէ. «Զատացոց գրոց գԴրիգոր Վարդապետն յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած ողորմի ասացէք իւր հօրն Աւետիքին և մօքն Զուհարին, և իւր ամենայն արեան մերձաւորցն, և Աստուած զձեզ յիշէ յիւր միւսանգամ գուլուստն, ամէնց (Յուցակ Զեռ. Ս. Յակոբեանց, Ե. Հատոր, 1971, էջ 180-181):

Աստանցի Համբան Գրիչ, որ 1723ին Երուսաղէմի մէջ Աւետարան մը օրինակած և ծաղկած է Շղթայակիր Գրիգոր Պատրիարքի յանձնարարութեամբ, գրած է հնաեեալ յիշատակարանը. «Մ'կ ասուածընակիր գասաք կարգաւորաց, յորժամ ընթեռնուք աստուածախօս Սր. Աւետարանա, յիշեցէք ի Քս. Եռամեմեար և լուսածորան զարագան հայրն մեր զիաղէցից Տէր Գրիգոր Աստուածաբան Վարդապետն, որ է պատրիարք Սր. Աթոռոյա Երուսաղէմի, որ ետ գրել զՍր. Աւետարան զայս յիշատակ իւրն և ծնողացն հանգուցից ի Տէր, մահաւոսի Աւետիսին, և Ճօնարին, ասելով Ած. ողորմի...» (Ս. Եպօ. Խապայեան, Յուցակ Զեռաց գրաց, Տետր Զ., էջ 435):

Այս լաւատեղեակ և վստահելի զոյդ վկաները կը կարծենք որ կը բաւեն համազելու ամենէն գծուարահամ բանակըն իսկ՝ թէ Գրիգոր Շղթայակիր ծնողքն են մահաւոսի Աւետիս (Աւետիք) և Ճօնար (Զուհար), և ոչ թէ Աւետիս քահանայ և Ստառ, ինչպէս սխալմամբ գրած է Հ. Ն. Ակինեան:

Ն. ԱՐԴ. ԾՈՎԱԿԱՆ